ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ**
**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
**МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА**
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
*Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663, E-mail: info@ejmiatsin.am*

№ 4974

<<15>> <<դեկտեմբերի>> 2025թ.

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Կից ուղարկվում է Վաղարշապատի համայնքապետի պաշտոնակատարի 27.11.2025թ. թիվ 1214-Ն որոշման քաղվածքը, բյուջեի համապատասխան հատվածները և նախահաշիվները:

Առդիր 104 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ թիվ Մ-22296-2025
«15» 12 2025թ

Կատարող՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Լ. Քալաշյան
Հեռ. +37423153663/590/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1214-Ն

«27» նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և ելնելով անհրաժեշտությունից.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝

1.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 30000.0 հազ. դրամ:

1.2. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածը /հոդ. 4264/ 9300.0 հազ. դրամ:

1.3. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 2400.0 հազ. դրամ, <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը /հոդ. 4252/ 1000.0 հազ. դրամ, <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածը /հոդ. 4264/ 2000.0 հազ. դրամ, <<Այլ հարկեր>> հոդվածը /հոդ. 4822/ 1000.0 հազ. դրամ և <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածը /հոդ. 5113/ 4850.0 հազ. դրամ:

1.4. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 600.0 հազ. դրամ:

1.5. Թանգարանների և ցուցասրահների /բաժին 08, խումբ 2, դաս 2/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 4500.0 հազ. դրամ:

1.6. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 40500.0 հազ. դրամ:

1.7. Արտադպրոցական դաստիարակությունների /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 2500.0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 23000.0 հազ. դրամ:

2.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը /հոդ. 4269/ 5000.0 հազ. դրամ և <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածը /հոդ. 5113/ 4850.0 հազ. դրամ:

2.3. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 8850.0 հազ. դրամ և <<Այլ հարկեր>> հոդվածը /հոդ. 4822/ 450.0 հազ. դրամ:

2.4. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 4400.0 հազ. դրամ:

2.5. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 600.0 հազ. դրամ:

2.6. Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 13500.0 հազ. դրամ:

2.7. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 6500.0 հազ. դրամ:

2.8. Այլ մշակութային կազմակերպությունների /բաժին 08, խումբ 2, դաս 4/ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածը /հոդ. 4239/ 4000.0 հազ. դրամ:

2.9. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 26000.0 հազ. դրամ:

2.10. Արտադպրոցական դաստիարակությունների /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 1500.0 հազ. դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Հավելված N 1

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2025 ԹՎԱԿԱՆԻ
# ԲՅՈՒՋԵ

Փոփոխված է Վաղարշապատ համայնքի ղեկավարի
պաշտոնակատարի 2025 թ.
նոյեմբերի 27-ի թիվ 1214-Ն որոշմամբ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԳԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ